



ARLIS

ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը N 946-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2015.08.26/55(1144)
Հոդ.794

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 18.08.2015
Ստորագրման ամսաթիվը 18.08.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- ⊕ [Կապեր այլ փաստաթղթերի հետ](#)
- ⊕ [Փոփոխողներ և ինկորպորացիաներ](#)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1504-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2015 թվականի N 946-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1504-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 20-րդ և 20.1-ին հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հաշիվների ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը հաստատելու մասին».

2) որոշման 1-ին կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 2-րդ ենթակետը,

բ. 4-րդ ենթակետում «անվավեր ճանաչման» բառը փոխարինել «չեղյալ ճանաչման» բառերով.

3) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը.

4) որոշման N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետի առաջին նախադասությունում «1-ին ենթակետով» բառերը փոխարինել «1-ին կամ 3-րդ ենթակետերով» բառերով և կետից հանել 2-րդ ու 3-րդ նախադասությունները,

բ. 5-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը,

գ. 6-րդ կետում «անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները» բառերը փոխարինել «անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր կամ նուտար չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ ապրանքի մատակարարում համարվող գործարք իրականացնելու և հարկ վճարողի հաշվառման համար ունենալու դեպքում» բառերով,

դ. ուժը կորցրած ճանաչել 7-րդ, 14-րդ, 24-րդ, 29-րդ, 30-րդ, 35-րդ, 61-րդ, 76-րդ և 77-րդ կետերը, ե. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Անձինք, անկախ տվյալ պահին ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից, կարող են վավերացնել ստացված հարկային հաշիվները:»,

զ. 9-րդ կետում «վերադարձը և անվավեր կամ» բառերը փոխարինել «դուրս գրված ճշգրտող հարկային հաշիվները կամ հարկային հաշիվների» բառերով,

է. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Սույն կարգին համապատասխան՝ անձինք ԱԱՀ վճարող համարվելու ժամանակաշրջանում իրականացրած ԱԱՀ-ով հարկվող գործարքների համար էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ կարող են դուրս գրել՝ անկախ դուրսգրման պահին օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից: Անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային հաշիվ կարող են դուրս գրել ապրանքի մատակարարում համարվող գործարք իրականացնելու և հարկ վճարողի հաշվառման համար ունենալու դեպքում:»,

ը. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Դուրս գրված հարկային հաշիվները և (կամ) դրանց սերիա-համարները չեղյալ են ճանաչվում կամ դրանց փոխարեն ճշգրտող հարկային հաշիվներ են դուրս գրվում հարկ վճարողների կողմից՝ սույն կարգով նախատեսված դեպքերում, կարգով և ժամկետներում:»,

թ. 23-րդ կետը «համատեղ գործերը վարողի անունից» բառերից հետո լրացնել «, ԱԱՀ-ի վերադարձի, ճշգրտող հաշիվ» բառերով, «տեխնիկական առաջադրանքով» բառերից հետո՝ «, իսկ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 1403-Ն որոշմամբ» բառերով,

ժ. 28-րդ կետից հանել «և տեղադրվում հարկ վճարողի համար վարվող՝ դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանքում» բառերը,

ժա. 33-րդ կետից հանել վերջին նախադասությունը,

ժբ. 34-րդ կետից հանել «կամ տեղեկանքը» բառերը,

ժգ. 69-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշմամբ հաստատված՝ հարկային հաշիվների չեղյալ ճանաչման կարգով չեղյալ ճանաչելու դուրս գրված հարկային հաշիվները, ինչպես նաև դուրս գրելու ճշգրտող հարկային հաշիվներ.»,

ժդ. 70-րդ կետի առաջին նախադասությունում «անվավեր» բառերը փոխարինել «չեղյալ» բառերով և կետից հանել երկրորդ նախադասությունը,

ժե. հավելվածը 80-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ բաժնով՝

«V. ՃՇԳՐՏՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

81. Գործարքը հարկային հաշվում նշված պայմաններով չկատարվելու, հարկային հաշվում նշված պայմանները օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոփոխվելու դեպքերում հարկային հաշիվ դուրս գրող անձը դուրս է գրում ճշգրտող հարկային հաշիվ:

82. Սույն կարգի իմաստով գործարքը համարվում է հարկային հաշվում նշված պայմաններով չկատարված կամ հարկային հաշվում նշված պայմանները համարվում են փոփոխված՝

1) եթե գնորդը (ծառայություն ստացողը) հրաժարվել է ընդունել առաքված ապրանքները կամ մատուցված ծառայությունների արդյունքները (կամ դրանց մի մասը), կամ մատակարարը (ծառայություն մատուցողը) հրաժարվել է հանձնել առաքված ապրանքները կամ մատուցված ծառայությունների արդյունքները (կամ դրանց մի մասը).

2) եթե գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է և համաձայն գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրի՝ գնորդի կողմից այդ ապրանքները չիրացնելու հետևանքով դրանք վերադարձվում են մատակարարին.

3) գործարքի պայմանները օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոփոխվելու դեպքերում, երբ պայմանների փոփոխման արդյունքում մատակարարված ապրանքների քանակը կամ մատուցված ծառայությունների ծավալները նվազում են:

83. Սույն կարգի 82-րդ կետով սահմանված դեպքերում հարկային հաշիվ դուրս գրող անձը դուրս է գրում ճշգրտող հարկային հաշիվ: Ճշգրտող հարկային հաշվում նշվում են այն դուրս գրողին և ստացողին վերաբերող պարտադիր լրացման ենթակա տվյալները, ինչպես նաև այն հարկային հաշվի սերիան, համարը և դուրսգրման

ամսաթիվը, որը ճշգրտվում է: Դուրս գրվող ճշգրտող հարկային հաշվում արտացոլվում են հետ վերադարձվող ապրանքների կամ մատուցված ծառայության չընդունված մասի անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայության տեսակն ու ծավալը, ինչպես նաև այդ ցուցանիշների նկատմամբ նախկինում դուրս գրված հարկային հաշվում նշված տվյալները (միավորի գինը, արժեքը, ԱԱՀ գումարը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դեպքում՝ ակցիզային հարկի գումարը) և հարկային հաշվում պարտադիր լրացման ենթակա այլ տվյալները: Մատակարարի կողմից ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում ապրանքների վերադարձման կամ մատուցված ծառայությունների արդյունքների չընդունման (չհանձնման) օրը:

84. Ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման դեպքում գործարքի կողմեր համարվող ԱԱՀ վճարողները պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքներն արտացոլել համապատասխան ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում, իսկ օրենքով սահմանված դեպքում ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու դեպքում՝ ԱԱՀ վճարող համարվելու ժամանակահատվածի վերջին օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում:

85. Անկախ սույն կարգի դրույթներից՝ ծառայությունների մատուցմանը վերաբերող ճշգրտող հարկային հաշիվ չի կարող դուրս գրվել, եթե այդ ծառայություններն արդեն իսկ (փաստացի) մատուցվել են գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հարկային հաշվում նշված պայմաններով կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ ծառայության արդյունքի հետ հանձնումն ուղղակի անհնարին է: Ապրանքի մատակարարման դեպքում ճշգրտող հարկային հաշիվ չի կարող դուրս գրվել, եթե ապրանքը չի կարող վերադարձվել:»:

5) որոշման N 3 հավելվածում՝

ա. 1-ին կետից հանել «և հարկային մարմնի կողմից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերը» բառերը,

բ. 2-րդ կետից հանել «կամ հարկային հաշիվների ձևերի» բառերը.

6) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Հ. Արահամյան

2015 թ. օգոստոսի 18
Երևան

Հավելված
«ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 18-ի N 946-Ն որոշման

«Հավելված N 4
«ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԶԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 20.1-ին հոդվածին համապատասխան հարկային հաշիվների չեղյալ ձանաչման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում «ապրանքների մատակարարում», «ծառայությունների մատուցում», «գործարք» հասկացությունները կիրառվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառված իմաստով, իսկ «կնքված պայմանագիր» հասկացությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (մասնավորապես՝ օրենսգրքի 436-րդ, 448-րդ հոդվածներով) սահմանված իմաստով՝ անկախ կնքման ձևից (օրինակ՝ բանավոր):

3. Սույն որոշմամբ սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվները կարող են հարկային հաշիվ դուրս գրող անձի կողմից չեղյալ ձանաչվել սույն կարգին համապատասխան՝ սխալներով լրացված լինելու դեպքում: Սույն կարգի իմաստով հարկային հաշվի սխալներով լրացված լինելու հիմքերն են՝

1) ապրանքներն առաքվել (ծառայությունները մատուցվել) են գնորդին, սակայն հարկային հաշիվը դուրս է

գրվել այլ անձի անունով.

2) ապրանքների մատակարարմանը (ծառայությունների մատուցմանը) վերաբերող հարկային հաշիվը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք).

3) հարկային հաշիվով մատակարարվող ապրանքի (մատուցվող ծառայության) ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկի դրույքաչափ կամ ավելացված արժեքի հարկի գումար) լրացվել է սխալ:

4. Սխալներով լրացված և դուրս գրված հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում ինտերնետային կապի միջոցով հարկային հաշիվների դուրսգրման ծրագրի միջոցով՝ կիրառելով ծրագրի համապատասխան ֆունկցիան: Տվյալ դեպքում հարկային հաշվի թղթային տարբերակի վրա դուրս գրողի կողմից սույն կարգի 3-րդ կետում նշված հարկային հաշիվը չեղյալ ճանաչելու հիմքի (պատճառի) վերաբերյալ գրառում է կատարվում: Ընդ որում, եթե չեղյալ ճանաչելու պահին հարկային հաշիվը վավերացված է տվյալ հարկային հաշիվով ապրանք ձեռք բերողի կամ ծառայություն ստացողի էլեկտրոնային ստորագրությամբ, ապա այդ գրառումը ստորագրվում է նաև ստացողի կողմից: Հարկային հաշվի լրացման հետ կապված այն դեպքերում, երբ ապրանքներն առաքվել են գնորդին կամ ծառայությունները մատուցվել են ստացողին, սակայն հարկային հաշիվը դուրս է գրվել այլ անձի անունով, հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում, եթե հարկային հաշվի թղթային տարբերակի վրա առկա է ապրանքներ ձեռք չբերելու կամ ծառայություններ չստանալու վերաբերյալ այն անձի ստորագրությամբ գրառումը, ում անունով դուրս է գրվել հարկային հաշիվը: Սույն կետով սահմանված կարգով հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում հիմքերից որևէ մեկն առաջանալու օրվան հաջորդող մինչև 15-րդ օրը:

5. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան, տնտեսավարող սուբյեկտի գործունեության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված, հարկային հաշիվը նախօրոք դուրս գրվելու դեպքում (պայմանով, որ ապրանքները պետք է մատակարարվեն կամ ծառայությունները պետք է մատուցվեն հարկային հաշվում նշված համապատասխան օրը) հարկային հաշիվը չեղյալ է ճանաչվում սույն կարգի 4-րդ կետի պայմանների պահպանման դեպքում:

6. Այն դեպքում, երբ սույն կարգի 3-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը հայտնի է դարձել սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետից հետո, ապա սույն կարգի 4-րդ կետի պահանջների պահպանմամբ հարկային հաշիվը չեղյալ ճանաչվելու դեպքում հարկային հաշվի վրա նշվում է նաև հարկային հաշվի չեղյալ ճանաչման հիմքը հայտնի դառնալու ամսաթիվը, ամիսը և տարեթիվը:

7. Այն գործարքների գծով դուրս գրված հարկային հաշիվները, որոնց մասով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ իրավական այլ ակտերով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում, չեղյալ չեն ճանաչվում: Նշված դեպքում հարկ վճարողը չի ազատվում դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունից, եթե գործարքը կատարվել է:

8. Սույն կարգին համապատասխան՝ անմիջականորեն հարկային հաշիվներ դուրս գրած անձի (հանձնակատարի, գործակալի, համատեղ գործունեության մասնակցի) կողմից չեղյալ են ճանաչվում նաև հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունից դուրս գրված հարկային հաշիվները:»:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան